

ՖՐԱՆՍԱ

ԳԱԻԱՌԱԿՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՓՈՔՐ ՅԱՂԹԱՆԱԿԸ
UMP-Ի ԾԱՆՐ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ
ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԻ ՎՏԱՆԳԱԻՈՐ ՅԱՌԱՋԽԱՂԱՑՔԸ**

Մարտ 20ին Ֆրանսայի մէջ տեղի ունեցաւ գաւառակներու ընտրութիւններուն առաջին շրջանը:

21,4 միլիոն Ֆրանսացիներ հրաւիրուած էին քուէարկելու, ընտրելու համար 2.026 ընդհանուր խորհրդակազմներ: Սակայն արձանագրուեցաւ ձեռնպահութեան նոր մրցանիշ մը աւելի քան 65%ով, այլ խօսքով քուէարկողներու տոկոսը 45%էն ցած եղաւ:

Կարելի է ըսել, որ արդիւնքները շատ ծանր ազդարարութիւն են իշխանութեան գլուխ գտնուող UMP կուսակցութեան համար: Արդարեւ, ան 15,75%ով հազիւ կրցաւ առաջ հասնիլ Մարին Լը Փէնի գլխատրած Ազգային Ճակատէն (14,22%), որ նոր շունչ ստացած ըլլալ կը թուի: Ամենէն լաւ արդիւնքները ձեռք ձգեց Ընկերվարական կուսակցութիւնը (24,88%): Բնապահները ստացան քուէներու շուրջ 8%ը, իսկ Չախի ճակատը՝ 9%ը:

Ընկերվարականները կանխահաս կը գտնեն յաղթանակ գոչելու համար: Կուսակցութեան ընդհանուր քարտուղարուհին՝ Մարթին Օպրի ժողովուրդին



Մարթին Օպրի եւ Սեսիլ Տիւֆլօ

կոչ ըրաւ աւելի մեծ թիւով մասնակցելու Բ. շրջանին, արտայայտելու համար իր «զգուանքը» եւ «փոփոխ (շար.ը էջ 2)

ՓԱՐԻՉ

**ԺԵՏՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
ՀԱՐՈՒԱԾԱԾ Է ԳԻՐՔԻ
ՏՕՆԱՎԱՃԱՌԸ**

Ֆրանսահայ Կազմակերպութիւնները Համակարգող Խորհուրդը (CCAF) հաղորդագրութեամբ մը կը յայտնէ թէ ժխտողականութիւնը ազատ համարձակ գլուխ ցցած է նաեւ Փարիզի Գիրքի տօնավաճառին:

Այսպէս, Փորթ տը Վէրսայլի մէջ, թրքական տաղաւարը անվճար բաժնած է «Թուրքիա՝ 2000 տարուան պատմութիւն» խորագրեալ գիրք մը, ուր տեղ գտած են ժխտողականութիւն պարունակող բաժիններ: Հոն ներկայացուած է Անգարայի պաշտօնական տեսակէտը, այսինքն Յեղասպանութեան իրողութիւնը կտրականապէս հերքուած է: Բայց ոչ միայն այդքան: Դերերը շրջուած են եւ այնպէս ներկայացուած է որ Թուրքերն են որ ենթարկուած են Հայոց ջարդին: Հետեւաբար, անոնք դիմեր են ինքնապաշտպանութեան, ստիպուել են ձեռնարկել բնակչութիւններու տեղահանութեան, որ «յաջողութեամբ պսակուեցաւ, քանի որ Հայերուն մեծ մասը ապահով ձեւով փոխադրուեցաւ դէպի Սուրիա»:

ԼԻՊԻԱ

**ՄԱԿ-Ը ԱՐՏՕՆԵՑ,
ԴԱՇՆԱԿԻՑ ՈՒԺԵՐԸ ՅԱՐՉԱԿՄԱՆ ԱՆՑԱՆ**

Մինչ տեղւոյն վրայ Քատաֆի կը շարունակէր անարգել ձեւով ջարդել իր հարազատ ժողովուրդը՝ իր աթոռը պահպանելու միակ մտահոգութեամբ, Հինգշաբթի գիշեր նիւ Եորքի մէջ, ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդը վերջապէս ժողով գումարեց: Տասնհինգ անդամներէն՝ Գերմանիա, Հնդկաստան, Չինաստան, Ռուսաստան եւ Պրագիլ նախընտրեցին ձեռնպահ

մնալ: Բանաձեւը, որ ընդունուեցաւ 10 ձայնով, կ'արտօնէ անհրաժեշտ բոլոր միջոցներուն դիմել, պաշտպանելու համար կիպիոյ բնակչութիւնը՝ իր իսկ ղեկավարին դէմ: ԱՄՆ-ու նախագահը Օպամա շատ խիստ ու կտրուկ խօսքերով Քատաֆին հրաւիրեց դադրեցնելու ժողովուրդին ուղղուած բռնութեան ամեն քայլ: Սակայն մենատէրը յայտնեց (շար.ը էջ 2)

**ԱՅՆՔԱՆ ԱՏԵՆ ՈՐ
ԺԵՏՈՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ՊԱՏԺԵԼԻՈՒԹԻՒՆԸ
ՆԱԽԱՏԵՍՈՂ ՕՐԻՆԱԳԻԾԸ
ՉՎԱԻԵՐԱՑՈՒԻ...**

Այս եւ նման զազրելի կեղծիքներու կամ ստայօղ քարոզչութիւններու դեռ երկար ատեն պիտի հանդիպինք Ֆրանսական հողին վրայ: Թուրքերը պիտի շխուսափին ատկէ այնքան ատեն որ 2006 Հոկտեմբեր 12ին Ազգային Ժողովին կողմէ քուէարկուած ժխտողականութեան պատժելիութիւնը նախատեսող օրինագիծը չվաւերացուի Ծերակոյտին կողմէ:

ՄԱԿ-Ը ԱՐՏՕՆԵՑ, ԳԱՇՆԱԿԻՑ ՈՒԺԵՐԸ...

(շար. Ա. Էջէն)

տարարութիւններով ընդառաջած ձեւացնելով հանդերձ այդ ազդարարութիւններուն եւ հրադարար ալ հոշակելէ ետք, շարունակեց իր յարձակումները անպաշտպան ժողովուրդին դէմ:

Ֆրանսա Շաբաթ, Մարտ 19ին Փարիզի մէջ կազմակերպեց միջազգային վեհաժողով մը, որուն հրաւիրեց Արաբական կիկայի ղեկավարներն ալ, քննարկելու համար լիպիական վերջին զարգացումները: Արագօրէն կազմա-



Թրիպոլիի մէջ, Քատաֆիի յենակէտերէն մէկը, դաշնակից օդանաւերու ուժակոծումէն վերջ

կերպուեցաւ դաշնակցութիւն մը, որ որոշեց օդային ճամբով հարուածել բռնակալին դիրքերը: Մարտ 20ին իսկ ֆրանսական եւ բրիտանական օդանաւեր սկսած էին ուժակոծել ուղիւղակի կարեւորութիւն ներկայացնող Քատաֆիի յենակէտերը: Կիպիոյ մենատէրը նոր հրադարար մը հոշակած էր: Բայց լիպիացի ղեկավարին եւ իր ուժերուն կողմէ այդ մէկն ալ յարգուած չըլլալով, Մարտ 21ին դաշնակից օդանաւերու ուժակոծումները կը շարունակուէին:

NOR HARATCH

Journal hebdomadaire en langue arménienne
83, rue d'Hauteville, 75010 Paris
Téléphone: 01 55 32 06 72
contact@norharatch.com
annonces@norharatch.com
abonnements@norharatch.com

Journal édité par SARL Nor Haratch
Directeur de publication: Jiraïr Jolakian
CPPAP: 1110 I 90193
ISSN: 2105-7672
Imprimé et distribué par SAS Inter Routage
49-55, rue des Écoles,
93321 Aubervilliers Cedex

Prix d'Abonnement annuel (France): 220 €
Prix d'Abonnement annuel (Hors France): 270 €

ԳԱԻԱՌԱԿՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(շար. Ա. Էջէն)

խուժեան կամքը»:

UMP-ի ընդհանուր քարտուղարը՝ Ժան-Ֆրանսուա Գոպիէ, առաջին արդիւնքներու յայտարարութենէն անմիջապէս վերջ ելոյթ ունենալով շարժման կողմը երկրորդ շրջանին սահմանափակելու համար վնասները: Ան յայտարարեց նաեւ թէ որեւէ ձեւով որեւէ



Ժան-Ֆրանսուա Գոպիէ

տեղ պիտի չզինակցին Ազգային Ճակատին հետ, Բ. շրջանին համար. միանգամայն բացառեց նաեւ որեւէ հանրապետական ճակատի կազմութիւն՝ ընկերվարականներուն հետ, ընդդէմ Ազգային Ճակատին:

Փաթիւք Տէվէճեան որ կը ներկայանար Պուռ-լա-Ռէնէն, 34,2%ով գլուխը հասնելով հանդերձ, մնաց երկրորդ շրջանին: Իր գլխաւոր թշնամիներէն Իզապէլ Պալքանի, որ աչք ունի Հօ տը Սէնի Ընդհանուր Խորհուրդի անոր գրուած աթոռին, հակառակ ամեն ինչի, յայտնեց թէ Բ. շրջանին կը փափաքի Տէվէճեանը յաղթական տեսնել: Տիկին Պալքանի ինք ալ 37,4%ով երկրորդ շրջանին մնացած է, Լըւալուա-Փերէի հարաւային բաժանմունքին մէջ: Նշենք, որ Իլ-տը-Ֆրանսի մէջ ոչ մէկ ընդհանուր խորհրդական ընտրուեցաւ առաջին շրջանէն:

ԵԼՐՏՈՒՄՆԵՐ ՆԱԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

Կիրակի, Մարտ 20ին, Տէրապի մէջ, որ կը գտնուի մայրաքաղաք Դամասկոսէն շուրջ 100 քմ. հարաւ, ցուցարարները կրակի տուած են Սուրիոյ իշխանութեան գլուխը գտնուող Պասա կուսակցութեան կեդրոնատեղին:

Յորդանանի սահմանամերձ, 75.000 բնակչութեան տէր այս քաղաքին մէջ ցուցերը արդէն թեւակոխած են երրորդ օրը. բացի Պասաի շէնքէն, հրկիզուած են դատարաններն ալ, ինչպէս նաեւ Սիրիաթէլ հեռաձայնի ընկերութեան աշխատատեղիները: Ան կը պատկանի Լամի Մախլուֆի, որ նախագահ Պաշար ալ Ասատին զարմիրն է: Այս առթիւ, ցուցարարներէն մէկը ըսած է, թէ «Ճնշման եւ կաշառակերութեան խորհրդանիշեր հրկիզած են»:

Կիրակի, իրիկունը, ցուցարարներու հակակշռին տակ կը գտնուէին Տէրապի հին թաղամասերը, մինչ մեծ թիւով ոստիկաններ առաքուած էին շրջան:

Ներկայիս, նախագահ Ասատ որ առաջին անգամ այս ծաւալով բողոքի շարժումի մը դէմ յանդիման կը գտնուի, կը փորձէ խաղաղ միջոցներով կարգադրել հարցը: Ան, կառավարական բազմաթիւ ներկայացուցիչներ ղրկած է դէպքերու հանդիսավայր այդ քաղաքը, փորձելու համար մեղմել կիրքերը: Յուցարարներու գլխաւոր պահանջն է վերացումը արտակարգ իրավիճակին, որ հաստատուած է 1963ին:

ՈՒ... ՄԱՐՈՔԻ ՄԷՋ

Կիրակի, Մարտ 20ին, հազարաւոր ցուցարարներ տողանցած են Մարոքի զանազան քաղաքներուն մէջ ալ: Անոնք պահանջած են առաւել ժողովրդավարութիւն, ընկերային արդարութիւն եւ պայքար՝ կաշառակերութեան դէմ:

ԵԳԻՊՏՈՍ

ՅԵՏ ՄՈՒՊԱՐԱՔԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Շաբաթ, Մարտ 19ին եգիպտոսի մէջ տեղի կ'ունենար Սահմանադրութեան մասին հանրաքուէ մը: Մուպարաքի վարչակարգին անկումէն ետք կազմակերպուած այս առաջին քուէար-

կութիւնը աննախընթաց մասնակցութիւն մը ապահոված է: Ընտրական գրասենեակներու առջեւ յաճախ գոյացած են մինչեւ 300 մեթր երկարութեամբ հերթեր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻԻԼԷԱԿԱՅԱՆԻՆ ՄԷՋ «ԶԻ ԿԱՐՈՂ ՍՏԵՂԾՈՒԵԼ» ՖՈՒՔՈՒՇԻՄԱՅԻ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Մինչ այս օրերուն, Ֆուքուշիմայի (Ճափոն) աղէտէն ետք ամբողջ աշխարհի ուշադրութիւնը սեւեռած է հիւլէականի ոլորտին վրայ, անկարելի է չմտահոգուիլ Հայաստանի հիւլէականի ապագայով, մանաւանդ երբ նկատի ունենանք որ Հայաստան ալ երկրաշարժի գոտիի վրայ կը գտնուի:

Այս մասին, Հայաստանի հիւլէական ապահովութեան պետական կոմիտէի նախագահ Աշոտ Մարտիրոսեան «Ազատութիւն» ձայնասփիւռին տուած հարցազրոյցին մէջ կատարած է որոշ հաստատումներ: Յիշելով կատարուած ուսումնասիրութիւնները, ան ըսած է, որ Ճափոնի մէջ վերջերս տեղի ունեցած երկրաշարժի ուժգնութեամբ երկրաշարժ երբեք տեղի չունենար Հայաստանի մէջ:

Ան նշած է, որ հայկական հիւլէական յանրին նախքան գործածութեան վերաբացուիլը կատարուած ուսումնասիրութիւնները, 1995ին ցոյց տուած են, որ անոր վայրը ճիշդ ընտրուած է, աւելցնելով որ կայանի թէ՛ ցնցումային, թէ՛ ընդհանուր ապահովութիւնը տարուէ տարի կը բարելաուի:

Հիւլէական ապահովութեան պետական կոմիտէի նախագահը յայտնած է նաեւ թէ անցեալին հիւլէականի ապահովութեան մակարդակը նախատեսուած էր 7 եւ 8 բալի համար, հիմա արդէն նոր գնահատում կատարուած է կարելի ամենասաստիկ երկրաշարժի համար: «Հաշուարկները ցոյց են տուել, որ ամօմակայանը ունի անհրաժեշտ ամրութեան պաշար, որ պէսզի դիմակայի նման երկրաշարժի», նշած է Մարտիրոսեան հաւաստելով, թէ ապահովութեան ա՛լ աւելի խիստ պահանջներ կը դրուին կառուցուելիք ուժանիւթի նոր բաժանումներու շինանարութեան առթիւ:

ԹՈՒՐՔ ՆԱԽԱՐԱՐԸ ԿՈՒՋԷ ՈՐ ՓԱԿՈՒԻ ՄԵԾԱՄՕՐԻ ՀԻԻԼԷԱԿԱՅԱՆԸ

Ինչպէս գրած էինք, Թուրքիա Ռուսաստանի օժանդակութեամբ կ'ուզէ հիւլէական կանգնեցնել իր հողերուն վրայ: Այլ ծրագիր մըն ալ կայ Ճափոնցիներուն հետ:

Օրուան ամենէն հրատապ հիւլէական

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԱԶԵՐԻՆԵՐԸ ՊԱՏԱՆԻՆԵՐ ՓՈԽԱՆԱԿԱԾ ԵՆ

Մարտ 17ին, Հայաստան Ազերպայճանին վերադարձուցած է յիսնապետ Անար Հաճիւլը: Փոխարէնը՝ Ազերիներն ալ Հայաստանի յանձնած են Արթուր Բաղալեանը: Փոխանակումը տեղի ունեցած է շփման գոտիին մէջ, Աղզամի շրջանը:

Ներկայիս Հայաստանի մէջ բանտարկուած կը մնայ ազերպայճանցի ուրիշ յիսնապետ մը, մինչ ութ հայ քաղաքացիներ արգելափակուած են ազերպայճանական բանտերու մէջ:

Երեք հայ զինուորներ ալ, որոնք 2009 Փետրուարին կամովին յանձնուած էին ազերպայճանական բանակին, ղրկուած են երրորդ երկիր մը, իրենց դիմումին համաձայն: Երկրին անունը չէ յայտնուած: Ազերպայճանական կողմը անցած զինուոր եւ քաղաքացի քանի մը ալ Հայեր եւ երրորդ երկիր մը ղրկուելու փափաք յայտնած են:

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ ՄԸ ԵՒՍ ՍՊԱՆՆՈՒԱԾ Է

Պատանդներու փոխանակումը դեռ հազիւ կատարուած, քանի մը ժամ վերջ ազերպայճանական նոր կրակոցներ թիրախ առած են սահմանագծի Ասկերանի շրջանի հայկական դիրքերը: Ծանրօրէն վիրաւորուած է 20ամեայ Ահարոն Հայրապետեան, որ մահացած է փոխադրուած հիւանդանոցը:

յանի հարցը հոս եւս վիճարկումի նիւթ դարձած է այս առթիւ: Մետվետեի հետ հանդիպումէն ետք վարչապետ էրտողանի այս մասին շատ ինքնավստահ արտայայտութիւններուն եկած են միանալ Թուրք ուժանիւթի նախարարին հաստատումը: Մինչ անդին երկրին մէջ կարեւոր ցոյցեր տեղի ունեցած են նման ծրագրի մը իրագործման դէմ, ան ըսած է, որ պիտի կառուցանեն այնքան ապահով հիւլէական մը, որ անոր ճիշդ քովը կարելի պիտի ըլլայ ձուկ որսալ:

Ապա աւելցուցած է, թէ անոնք որոնք կը մտահոգուին կառուցուելիք այդ հիւլէականով, աւելի լաւ կ'ընեն եթէ մտահոգուին Հայաստան գտնուող հիւլէականի գոյութեամբ: Յայտնած է որ զայն փակել տալու համար Թուրքիա պիտի կատարէ անհրաժեշտ դիմումները միջազգային մարմիններուն:

ԹՈՒՐՔԻԱ ՌԱԿԸՓ ԶԱՐԱՔՈՂՈՒ ԿՐԿԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ Է

Թուրք այլախոհ հրատարակիչ Ռակրի Զարաքուլու, գրող Մէհմէտ Կիւլէրի հետ կը դատուէր 2010 Սեպտեմբերէն ի վեր, «ԿՇԿ*» ամբողջական պետութիւն եւ Քիւրտերը առանց պետութեան» գիրքին մէջ ՓՔՔ-ի քարոզչութեան ամբաստանութեամբ:

Մարտ 10ին, Զարաքուլու դատապարտուած է 7 տարի բանտարկութեան, արգիլուած այդ գիրքը հրատարակած ըլլալու մեղադրանքով:

Եւրոպայի Հայ Դատի գրասենեակը այս առթիւ կը յիշեցնէ, որ Ռակրի Զարաքուլու եւ իր կինը Այշէ, որ այսօր մահացած է, 1970ականներէն հալածանքներու ենթարկուած են, դատուած ու բազմիցս բանտարկութեան պատիժներու դատապարտուած՝ որոշ գիրքեր, ի շարս որոնց Թուրքիոյ կողմէ գործուած Հայոց Յեղասպանութեան նուիրուածներ հրատարակած ըլլալու մեղադրանքով:

* «Քրտական համայնքներու միութիւն»:

«ԱՂԵՏ - ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ» ԺԱՊԱԽԵՆԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿՐԻՄ ՄՐՅԱՆԱԿԻՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ Է

Գերմանական հեռատեսիլի 2011 տարուան Կրիմ մրցանակին առաջնութիւնը շահած է «Աղէտ - Յեղասպանութիւն մը» (գերմաներէնին մէջ ալ պահպանուած է հայերէնով «Աղէտ»ը) փաստագրական ժապաւէնը:

Էրիք Ֆրիտլէրի պատրաստած այս ժապաւէնը այդ մրցանակին արժանացած է «Տեղեկատուութիւն եւ մշակոյթ» դասակարգին մէջ:

Ինչպէս անունէն ալ կարելի է կուսիլ, ժապաւէնը կը ներկայացնէ Հայոց Յեղասպանութիւնը: Այս փաստագրականը «Առթէ» կայանէն պիտի սփռուի ֆրանսերէն տարբերակով, 2011 Ապրիլ 20 ժամը 20.40ին, «Պատմութեան Զորքաբանները» հաղորդաշարի շրջագիծին մէջ:

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ ԹԷՈՂԻԿԻ «ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ»Ի 1923Ի ԹԻՒՆ ԱԼ (Բ. ԵՒ ՎԵՐՋԻՆ ՄՍՍ)

Նախորդ քանի մը հատորներուն նման՝ ծաւալուն եւ պէսպիսուն է ներկայ թիւին «Գեղարուեստական» գլուխը (էջ 176-327): Այստեղ, մասնաւորաբար ուշադրութիւն կը գրաւէ Համբարձում Զօրթեանի «Յախճապակի» խորագրեալ հմտալից ուսումնասիրութիւնը, որ երեսուն էջերու երկայնքին թէ՛ կը խօսի այս նրբագգի շքեղ ճարտարարուեստին ծագման, շինութեան եղանակին եւ աշխարհատարած հմայքին մասին, թէ՛ ալ կ'անդրադառնայ Կուտինայի հայ վարպետ յախճապագործներու սքանչելի ու բարձրարուեստ իրագործումներուն: Զօրթեան, որ առաջին անգամ է որ կ'երեւի Տարեցոյցին մէջ, կուտինահայ յախճապակեգործութեան գագաթային հանգրուանը կը նկատէ ժէ. դարը, երբ այս արուեստը կիրարկող գործարաններուն թիւը հասած էր մինչեւ 300ի: Հեղինակը ցաւով կը նշէ, որ հայոց առանձնաշնորհումը եղող Կուտինայի յախճապակեգործութիւնը բոլորովին խամրեցաւ Մեծ եղեռնի շրջանին, երբ արհեստին վերջին հմուտ վարպետներն ալ խառնուեցան դէպի Տէր Զօր քշուող աքսորի կարաւաններուն...:

Թատրոնի, թատերական շարժումներու կամ դերասաններու նուիրուած մեծաթիւ էջեր ալ հիւրընկալուած են այստեղ, մերթ իբրեւ գրական ուսումնասիրութիւն, մերթ իբրեւ յուշագրութիւն, մերթ իբրեւ կենսագրութիւն կամ տեղեկատուութիւն: Այդպիսին են թատերագէտ Սմբատ Դաւթեանի «Թատերական գրականութիւնը Թուրքիոյ հայոց մէջ»ը (էջ 268-277), Արամ Երեմեանի մտերիմ գրոյցը Հայ Բեմի կուլթերէն Սիրանոյշի հետ՝ իր բեմական կեանքին, թատերական փորձառութիւններուն կամ գործակից դերասան-դերասանուհիներուն մասին (էջ 280-292): Զրոյցը կատարուած է 1921-ին, Նոր Զուղա, երբ Սիրանոյշ իր ետին թողած էր արդէն շուրջ կէս դարու բեմական յաղթապանձ վաստակ մը:

Նոյնքան հետաքրքրութեամբ կը կարդացուին թատրոնի մէկ այլ նուիրեալի մը՝ Վահրամ Փափազեանի մասին (այն օրերուն՝ 34 տարեկան) Թէոդիկի ստո-

րագրած էջերը (299-309), ուր կը շեշտուի երիտասարդ այս տաղանդին նկատմամբ օտար դժուարահաճ շրջանակներու՝ ալ շահագրգռութիւնը, անվերապահ գնահատանքը, ներբողը:

Վերջապէս, «Գեղարուեստական» գլուխին տակ ինկած շահեկան գրութիւն մըն է նաեւ դարձեալ Թէոդիկի գրչով շարադրուած «Պոլսահայ երաժշտապետներ»ը (էջ 255-263), ուր կենսագրուած են ժամանակակից հեղինակաւոր 10 դարապետներ: Թէոդիկի զանոնք իրենց լուսանկարներով միատեղ պատմութեան յանձնած է «այն մտածումով որ նուիրական կամարներու տակ շարունակ Աստուծոյ, Աստուածորդուցն, Աստուածամօր եւ աստուածաշնորհ սուրբերու մեղեդիներ դաշներգող հայ դպիրը դերասանին կամ նկարչին չափ արժանի է Գեղարուեստի մարդ նկատուելու»:

1921ի եւ 1922ի Տարեցոյցերուն հետեւողութեամբ՝ Արշակ Ալպօյաճեան ներկայ հատորով եւս կը շարունակէ «Անկախ Հայաստան» խորագրեալ իր միամեայ ժամանակագրութիւնը, որ այս անգամ կ'ընդգրկէ Սեպտ. 1921- Սեպտ. 1922 երկարող տասներկու ամիսները: Գիտենք, որ տուեալ ժամանակաշրջանին Հայաստան արդէն իսկ ընդունած էր պոլշեիկ վարչակարգը, անգամ էր Անդրկովկասեան Հանրապետութիւններու Դաշնութեան ու հետեւորդ միաւոր մը դարձեր էր նոր-նոր կազմաւորուող Նորհրդային Միութեան: Ալպօյաճեան ի սկզբանէ կը գրէ արդէն. «Չեմ գիտեր թէ ո՞րքան պատշաճութեամբ կարելի է ԱնկԱն յորջորջել երկիր մը, որ կապուած է զանազան յանձնառութիւններով ուրիշ երկիրներու եւ կորուած է իր գործելու ազատութիւնը, եթէ ոչ ամեն մարդի՝ գէթ պետութեան անկախութիւնն ապահովող մի քանի ամենակենսական իրաւունքներու մէջ» (էջ 329): Այնուհետեւ ան կը գծէ Խ. Հայաստանի քաղաքական, ներքին վարչավարական, տնտեսական, երկրագործական, ընկերային ու կրթական նորածիլ կեանքին համայնապատկերը՝ անկողմնապահ ու իրապաշտ մերձեցումով: Նկատել կու տայ որ՝ Խ. Հայաստանի առաջին ղեկավարներուն գլխաւոր

մտասեւեռումն եղաւ Ազգին ֆիզիքական գոյութիւնը պահպանել, վերջ տալ ազգամիջեան կռիւներուն, անդորրութիւն հաստատել խոռվեալ երկրին մէջ ու մեղմացնել սովի կամ համաճարակի մահասփիւռ աղէտները: Միաժամանակ սակայն, Ալպօյաճեան կը մատնանշէ հայ կոմունիստ կառավարութեան անողոք խստութիւնները՝ իրեն ոչ-գաղափարակից տարրերուն նկատմամբ: Գեղարուեստի կը յայտնէ նաեւ հայերէնի դասական ուղղագրութիւնը փոխող 4 Մարտ 1922ի հրամանագրին նկատմամբ, զայն կը նկատէ հակագիտական ու քանդիչ ձեռնարկ մը, որ գաղութները կ'օտարացնէ մայր երկրին ու կը խզէ նոր սերունդին կապը հին շրջաններու մտաւոր արտադրութեանց հետ:

Ներկայ ժողովածոն ունի տակաւին այլազան գլուխներ, որոնք ի մի կը բերեն բանասիրական, տօմարագիտական կամ հնախօսական գրութիւններ, յուշագրութիւններ, նամականի, ծանօթ կամ նուազ ծանօթ դէմքերու կենսագրութիւններ, հայ տաղանդներու յաջողութիւններ, անդարձ մեկնողներ, գուարճալիք եւ մասամբ նորին...: Ամբողջ Տարեցոյցը զարդարուած է շուրջ 200 լուսանկարներով: Հատորը, այսպիսով, իր լրումին կը հասնի 452-րդ էջին վրայ: Անկէ ետք՝ սկիզբ կ'առնէ մեր կողմէ պատրաստուած «Յաւելուած»ի գլուխը (շուրջ 60 էջ), ուր թէ՛ առանձին ենթաբաժիններով տրուած է Տարեցոյցին բովանդակութեան ցուցակը, թէ՛ ալ այբբենական կարգով ցանկագրուած են հատորին մէջ յիշատակուած բոլոր անձնանունները, տեղանուններն ու հայ մամուլի անունները՝ մատենագիտական հարկաւոր վերձանումներով կամ անհրաժեշտ ճշգրտումներով:

* * *

1923ի այս հատորով կը փակուի Թէոդիկի Տարեցոյցերուն Պոլսոյ հանգրուանը:

Հանրագումար՝ 13 հատոր, 5176 էջ: Նկատել տանք, որ Հալէպի վերահրատարակեալ հատորները, իրենց նախամուտքի եւ յաւելուածական բաժիններով, էջերու ընդհանուր այս թիւը կը բարձրացնեն մօտ 5965ի:

Հիմա, երբ կը պատրաստուինք ձեռնարկել Տարեցոյցերու արտապոլսական յաջորդ վեց թիւերուն (1924-29) վերահրատարակութեան աշխատանքին, պարտք կը սեպենք մեր խորին շնորհակալութիւնները յայտնել բոլոր անոնց, որոնք բաժին վերցուցին նախորդ հատորներու հրատարակչական գործին մէջ, կամ հրապարակաւ քա-

«ԱՆԵ՛Ղ ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆ, ԹԷ ՉԱՆԵԼ»

ԿԱՄ

ԱՐԱ Խ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՑՆՑԻՉ ՅՕԴՈՒԱԾԱՇԱՐՔԸ՝

ՈՒՂԵՑՈՅՑ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍԻՆ

(Դ. ԵՒ ՎԵՐՋԻՆ ՄԱՍ)

Այս գրությունները մեր հետապնդած հիմնական նպատակը եղաւ կարելի առաւելագոյն չափով ամփոփ գիծերու մէջ ներկայացնել Ա.Խ. Մանուկեանի խնդրայարոյց յօդուածաշարքը, հոն ընդհանրապէս տեղ գտած տրամադրութիւնները:

Մեզի չ'իյնար իրաւարարի դեր կատարել, ոչ ալ ունինք նման յաւակնութիւն: Վստահաբար շատ աւելի պատշաճ անձեր կան Հիմնադրամին թէ՛ կառուցին, թէ՛ վաստակին, թէ՛ դրականին եւ թէ՛ բացասականին մասին արտայայտուելու համար: Այս վերջինը կը շեշտենք, քանի իր կատարած հսկայ աշխատանքին կից, անկասկած Հիմնադրամն ալ ունի իր բացասականները, ինչպէս յօդուածաշարքն ալ կը փորձէ լոյս սփռել անոնց վրայ: Այս ամբաստանութիւններուն լաւագոյն լուսաբանութիւնները բերելու ամենէն ատակներն են կը կարծենք, նոյն Հիմնադրամի պատասխանատուները: Եւ ինչպէս գրած է «Հայաստան» հիմնադրամի գործադիր տնօրէն Արա Վարդանեան ալ իր նամակին մէջ (տե՛ս. «ՆՅ» թիւ 193), այնպէս կ'երեւի թէ անոնք պատրաստ են հրապարակաւ վիճարկելու նիւթին շուրջ: Լոս Անճըլըսի հայկական հեռատեսիլէն ուղղակի սփռում կատարելու որոշում մըն ալ կայացած է այս առընչութեամբ, սակայն դեռ թուականը չէ ճշդուած:

Պէտք է իրատես ըլլալ. չկայ անթերի կազմակերպութիւն եւ ցաւօք սրտի, Ա. Խ. Մանուկեանի ըսածներուն կարեւոր

մէկ մասը անկասկած իրականութեան կը համապատասխանէ: Մենք նկատի ունինք առաւելաբար մատնացոյց եղած այն երեւոյթները որոնք արդէն ընդունուած են եւ համատարած՝ Հայաստանի այսօրուան իրականութեան մէջ եւ որոնք անպայման յատուկ չեն Հիմնադրամին: Ինքնին անընդունելի եւ ազգակործան այդ մանրէներուն ներկայութիւնը համահայկական նման սրբազան կառույցի մը արիւնին մէջ ալ աւելի անընդունելի է:

Անշատաբար յօդուածաշարքին մէջ արտայայտուած միտքերու կամ տեղ գտած պնդումներու վիճելի կամ անվիճելի երեւոյթէն, պէտք է ընդգծել նաեւ յօդուածագրին կատարած լրագրական լուրջ աշխատանքը, ուր գրեթէ իւրաքանչիւր անցքի մասին մէջբերումներ կատարած է թերթերէ. բնականաբար, ասոնք ընդհանրապէս ընդգիմադիր մամուլէն անուններ են: Հարկ է ողջունել նաեւ իր յստակ լեզուն եւ բացայայտ դիրքորոշումը վեր առած հարցերուն նկատմամբ, որոնք պարկեշտ եւ համոզուած տիպար մը կը ներկայացնեն:

Բայց, ասոր հետ, պէտք է խոստովանիլ նաեւ որ աշխատութիւնը խոցելի բաժիններ ալ ունի: Առնենք, օրինակ, անոնցմէ «Հազարամեակի Մարտահրաւէրներ» Հիմնադրամին (ՀՄՀ) վերաբերողը: Մանուկեան եզրակացութիւններու բաժնին իր սիւնը դարձուցած է ամերիկեան այդ հիմնարկը որպէս բաղադատելի եւ տիպար օրինակ:

Նախ եւ առաջ հարկ է նշել որ պէտք է բաղադատել այն ինչ որ բաղադատելի է: Եւ մեր կարծիքով «Հայաստան» հիմնադրամի եւ ՀՄՀ-ի միջեւ Մանուկեանի կատարած բաղադատութիւնը այնքան ալ դիպուկ չէ: Անոնցմէ առաջինը ամերիկեան պետական կառույց մըն է որ ունի ամուր որոնայար մը, իր գործունէութիւնը սկիզբէն մինչեւ վերջ վերահսկելու ուրույն միջոցներով: Անդին, Հիմնադրամին մօտ այդ կառույցի կազմութիւնն է, որ արդէն գործին ամենէն դժուար մասը կը հանդիսանայ եւ վիճարկման նիւթին կիզակէտն իսկ է:

Այս բաղադատականին մէջ կայ հետեւեալ հակասութիւնն ալ: Մինչ Մանուկեան շունչ կը հատցնէ ապացուցանելու համար «Հայաստան» Հիմնադրամի քաղաքականացումը ըլլալու բնոյթը եւ կը պախարակէ զայն, անդին անգիտակցաբար նոյն բնոյթը կը վերագրէ նաեւ իրեն տիպար օրինակ ծառայողին: Այդ կ'ընէ, երբ կ'ըսէ, թէ 2008 Մարտ 1ի դէպքերու վաղորդայնին «Հազարամեակի Մարտահրաւէրներ»ուն գլխաւոր գործադիր տնօրէնը՝ Ճոն Տանիլովիչ Հայաստանի ապագային նկատմամբ իր մտահոգութիւնը յայտնած է իր նախագահութեան վերջին օրերը ապրող Ռոպէր Գոշարեանին: Տանիլովիչ մտահոգուած է ժողովրդավարութեան բնագաւառին մէջ Հայաստանի արձանագրած տեղատուութեամբ, անոր իրենց գործունէութեան վրայ ունենալիք հաւանական հետեւանքներով, եւլն.: Եթէ այս ամբողջը քաղաքականութեան չի հպիր, ուրեմն ի՞նչպէս կարելի է մեկնաբանել: Յետոյ, Ա. Խ. Մանուկեանի իսկ տողերով, Մարտ 1ի դէպքերէն ետք՝ «ՀՄՀ որոշում կայացրեց կրճատել օգնութիւնը: Արդիւնքում՝ 265 գիւղական համայնքներում 943 քմ. ընդհանուր երկարութեամբ գիւղական ճանապարհներ մնացին առանց վերանորոգման, ինչպէս նաեւ ակնկալուող 6 տոկոսով աղքատութեան նուազեցումը մնացին թղթի վրայ»: Կա՛ւ եղած է ուրեմն: Օրինակելի՞ քայլ՝ օրինակելի հիմնադրամին կողմէ: Եթէ իշխանութիւններն են ատոր պատճառը, վերջապէս ո՞վ է տուժողը:

«Հայաստան» համահայկական հիմնադրամին տրամադրուող իւրաքանչիւր նուիրատուութիւն վստահութեան քուէ է հայաստանեան եւ արցախեան ապականած իշխանութիւններուն՝ արտայայտութիւնն ալ այլ վիճարկումի մը նիւթ է: Ենթադրենք, որ հայաստանեան եւ արցախեան իշխանութիւններուն վերագրուած որակումը ճիշդ է (Հայաստանի կառավարութիւնը

չալերեցին մեզ՝ մեր սպառիչ աշխատանքին ճամբուն վրայ, - Գալուստ Կիւպէնկեան Հիմնարկութեան Հայկ. Բաժանմունքի տնօրէն պր. Զաւէն Եկաւեան, Հալէպի «Կիլիկիա» հրատարակչատան սեփականատէր պր. Մաթիկ Էպիլիաթեան, մեր վարպետ ու համբերատար գրաշարուհին՝ օր. Մարալ Տիքպիքեան, գրագէտներ Ռ. Հատտէճեան (Պոլիս), Պէպօ Սիմոնեան, Շահանգուխտ, Յակոբ Մանուկեան եւ Սարգիս

Կիրակոսեան (Պէյրութ), Պետրոս Հաճեան (Պուէնոս Այրէս) :

1923-ին Թէոդիկ ակամայ կղպեց Պոլսոյ իր տան դուռը ու շունչը առաւ արտասահման: Մենք զինք պիտի տեսնենք Փարիզի, Վիեննայի ու Վենետիկի մէջ՝ «Ամէնուն Տարեցոյցը»ի դրօշը բա՛րձր բռնած:

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆ

Հալէպ

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ

ԵՍ՝ ԻԲՐԵՒ ՄԱՍՆԻԿԸ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Բազմաթիւ Հայերու նման, ես ալ մտահոգուած եմ ներկայիս Հայ եկեղեցին յուզող տագնապներով:

Վերջերս լոյս տեսան այս նիւթին վերաբերեալ յօդուածներ. անոնցմէ մի քանին կը փորձէր նիւթը ներկայացընել, ուրիշներ՝ կը վերլուծէին վիճակը: Կարգ մը յօդուածագիրներ ալ՝ կարծես խղճի պարտականութենէ մղուած, դաստիարակչական ոճով ուղղութիւններ տուին ժողովուրդին, ինչպէս որ աշակերտին կը յիշեցնեն մոռցուած դաս մը: Նկատած եմ որ մտաւորականի տեղ անցնող անհատներ յաճախ կը պնդեն որ հարկ է դաստիարակել ժողովուրդը, բայց անոնց բերնին մէջ դարձող «դաստիարակել» բառը չի նշանակեր ճշմարտութիւնը ցոյց տալ, կամ տեղեկացնել, այլ՝ ընտելացնել վիճակի մը եւ մտածելու ձեւի մը: Այդպէս կ'ընեն կրկէսի մէջ:

Բոլորն ալ հետաքրքրական էին, շատ բաներ սորվեցայ գտնէ ես, բայց հասկցայ քիչ բան: Չհասկցայ ամենակարեւորը. ինչո՞ւ է այս ամբողջ աղմուկը: Ինձի այնպէս կը թուի որ կ'ուզենք երկնցնել պոչ մը, որուն շափը յատակօրէն կ'երեւի: Միւս կողմէն, յայտնի է նաեւ որ գիտակցութիւն մը կայ որ դեռ չի հրաժարիր արժէքներէ: Միայն թէ, արժէքին տեղը կորսնցուցած ենք:

Ես մաս կը կազմեմ ժողովուրդի մեծամասնութեան, այսինքն՝ ոչ մտա-

ւորական եմ, ոչ ղեկավար. ոչ ալ եկեղեցական քուլիսներուն ծանօթ մէկը, այլ սովորական Հայ մըն եմ, հայր մը, եւ կարելիս ըրած եմ զաւակներս հայ մեծցնելու Ֆրանսայի պէս երկրի մը մէջ, ուր միշտ դիւրին չէ ատիկա: Իբրին չէ, որովհետեւ ամեն անհատ այս խնդրին առջեւ մինակ է: Ուղղութիւն տալ ջանացողները կը կարծեն որ ատիկա խրատով կ'ըլլայ, մէջ մըն ալ՝ անյաշող արդիւնքի առթիւ՝ նախատանք, դատապարտութիւն:

Մտածումներս ուզեցի բաժնել «Նոր Յառաջ»ի ընթերցողներուն հետ, քանի որ շարձարուած համոզումովս, եկեղեցին նախ եւ առաջ ինձի պէսներուն համար է, այսինքն բազմութեան, ամբողջին, եւ անոր հոգեւոր պէտքերուն: Չեմ կարծեր որ անոր մասին խօսելու իրաւունքը վերապահուած ըլլայ միայն անոնց, որոնք հարուստ են անոր անցեալին եւ ներկային մասին գիտելիքներով: Եկեղեցին ունի անշուշտ իր պատմութիւնը, բայց եկեղեցին պատմութիւն չէ. ունի իր օրէնքները, բայց օրէնք չէ: Եկեղեցին նախ եւ առաջ եւ թերեւս միայն հաւատք առ Աստուած պէտք է նշանակէ, վայր մը աղօթքի, տեղ մը ուր մարդիկ կ'երթան իրենց աչքը դէպի ներս՝ դէպի իրենց հոգին դարձնելու եւ մաքրելու զայն շար մտածումներէ: Ասկէ կը բխի մնացեալը: Մինչդեռ, մեր կարգացած յօդուածներուն կամ ե-

կեղեցիին մասին կատարուած արտայայտութիւններուն մէջ մեզի կը ներկայացուի եկեղեցի մը, որ քարէ եւ հողէ շինուած նիւթ մըն է, կեդրոն մըն է աշխարհիկ որեւէ կեդրոնի մը պէս, որուն շուրջ կարծես Հայեր պէտք է հաւաքուին միայն, քանի որ ան դարերէ ի վեր հայկական ինքնութիւնը պահպաներ է: Անցեալը՝ անցեալ: Իսկ այսօր:

Հայ եկեղեցիին է հայկական ինքնութիւն պահպանողը, եթէ պահպանող հաստատութիւն կայ տակաւին: Քանի՞ տասնամեակներէ ի վեր Հայ եկեղեցին գայթակղած հովիւ մըն է իր կոյր հօտին համար, որ տակաւին կը յուսայ զինք վերագտնել՝ տագնապելով: Բարձունքին բազմած մեր հովիւը իր սրինգը կը նուազէ...:

Մէկը պէտք է մեզի, որ զայրանայ եւ Յիսուսի պէս գոչէ. «Իմ Հօրս տունը աղօթքի տուն է, բայց դուք զայն աւազակներու այր ըրիք»:

Եւ, այս բոլորին մէջ, «խօշ» բան մը: «Նոր Յառաջ»ի սիւնակներուն մէջ, Մարտ 5ին լոյս տեսաւ «Նիսի Հայ Եկեղեցւոյ Տագնապը եւ Մեր Հայ Ինքնութիւնը» վերլուծական յօդուածը: Ուշադրութեամբ կարդացի այնտեղ ըսուածները եւ կ'ուզեմ անպայման ըսել, որ շատ սիրեցի յօդուածագիրին հրեայ անհաւատ բարեկամը, որուն խօսքովը սկսած է յօդուածը: Կ'ըսէ թէ ան իր անհաւատ վիճակովը սինակոկիին դրամական եւ բարոյական օժանդակութիւն կը յատկացնէ, քանի որ իրենց կրօնական հաստատութիւնը իրենց ինքնութեան ողնայարը կը նկատէ: Այս անհաւատ Հրեան Հայերը անխելք կը կոչէ, որովհետեւ, ըստ երեւոյթին, անոնք չեն հասկնար թէ ի՞նչ պատճառով անհաւատ մը կրօնական հաստատութեան նեցուկ կը կանգնի կամ պէտք է կանգնի:

Շատ հետաքրքրական է: Բայց, միեւնոյն ժամանակ՝ միամիտ:

Պիտի խնդրէի որ յօդուածագիրը իր անհաւատ հրեայ բարեկամին հարցնէր, որ եթէ ան, օր մը անդրադառնայ, որ իր օժանդակութիւնը չի ծառայեր նպատակին, այլ կ'երթայ լեցնելու կղերապետին կամ վարչականներուն գրպանները, արդեօք պիտի շարունակէ՞ իր նուէրները շուսլել սինակոկիին:

Չըլլայ այն ժամանակ Հայերու շափ անխելք դառնայ ինք ալ:

ինք իսկ խոստովանանք կատարած է այս ախտին մասին), բայց մեր կարծիքով անով կատարուած անուղղակի պատգամը պղտոր է: Այսինքն, եթէ չենք ուզեր քաջալերել Հայաստանի եւ Արցախի կաշառակերներու հորդան, այլեւս լուծմ մը իսկ պէտք չէ՞ տանք: Իսկապէս ա՛յս է հարցերը լուծելու լաւագոյն միջոցը:

Սխալ է Հիմնադրամէն գծել այնպիսի պատկեր մը, որ զայն կը ներկայացնէ մեծ մասամբ գող-աւազակներու կոյտ մը: Մանաւանդ պէտք չէ մոռնալ, որ այդպիսիներուն քով բարեբախտաբար եղան եւ կան մեծ թիւով իսկական նուիրեալներ, քարին վրայ քար մը եւս գետեղելու համար՝ սիրտ ու կեանք մա-

շեցնողներ ալ:

Հոն ուր Մանուկեան հարիւր տոկոս իրաւացի է, կաշառակերութեան հարցն է: Ըստ մեզի հող է որ կը գտնուի բոլոր հարցերուն աղբիւրը, եւ ոչ միայն «Հայաստան» հիմնադրամին վերաբերողներուն, այլեւ՝ մինչեւ երկրին պարպուելու իրականութեան: Ներկայիս, մեր ամենէն հրատապ պայքարը կը թուի ըլլալ ան: Ատոր դէմ է որ պէտք է պայքարինք համահայկական շափով:

Արա Խ. Մանուկեանի կատարած մատնանշումները պէտք է ծառայեն այդ հիւժախտին դէմ պայքարին, դարմանումի գործին...:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿՈՊԷԼԵԱՆ
(Շար. 4 եւ Վերջ)

ԽԱՉԱՏՈՒԲ ՏԷՐ ԵՂԻԱՅԵԱՆ
Փարիզ, 2011 Մարտ 8

ԶՈՒԻՑԵՐԻԱ

ՀԱՅ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ ԱՐԱՆՈՒ - ՕՊԵՐԸՆԴՖԵԼՏԵՆ

Շաբաթ, Մարտ 12, երեկոյան ժամերուն, հոծ բազմութիւն մը հաւաքուած էր գերմանախօս Զուիցերիոյ սրտին մէջ հաստատուած ազգօգուտ Միութեանս սրահը: Ազգայիններ, որոնք Զուիցերիոյ տարբեր շրջաններէն ժամանած էին պատուելու համար օրուան հանդիսութիւնը, ուրախ տրամադրութիւններով զիրար կ'ողջունէին, միաժամանակ օգ-

յոց հոգեւոր հովիւը՝ Աբէլ Քհնյ. Մանուկեան, ՀՀ Դեսպանութեան դեսպանորդը՝ Տիկին Սաթենիկ Աբգարեան եւ ամուսինը՝ Կարէն Շառոյեան՝ ինչպէս նաեւ Առեւտուրի Համաշխարհային Կազմակերպութեան մօտ Հայաստանի մշտական ներկայացուցիչը՝ Աւետիս Յովհաննիսեան:

Հանդիսութիւնը բացուած յայտարարուեցաւ Հայ Դպրոցական եւ Ընտանեկան Միութեան Վարչութեան նախագահ Կարօ Տիսթիճիի խօսքով, որու ընթացքին ան ներկայ հիւրերուն փոխանցեց հետեւեալ տեղեկութիւնները. «Հայ Դպրոցական եւ Ընտանեկան Միութիւնը 1982 թուականէն սկսեալ գերմանախօս Զուիցերիոյ մէջ լծուած է հայապահպանման



Նստած ձախէն՝ Աւետիս Յովհաննիսեան, Աբէլ Քհնյ. Մանուկեան, Սաթենիկ Աբգարեան, Գրիգոր Էլմատեան եւ ՀԴԸՄ Վարչութեան անդամները

մշակութային գործունէութեան, կազմակերպելով եկեղեցական, կրթական եւ մարզական միջոցառումներ:

Զուիցերիոյ Հայց. Առաքելական Ս. Յակոբ Եկեղեցւոյ Վարչութեան հետ միատեղ կը նշենք ծիսական-եկեղեցական զանազան արարողութիւններ, ազգային-եկեղեցական տօնակատարութիւններ եւ Հայոց լեզուի դասընթացքներ: Ունինք Զուիցերիոյ հայ համայնքի միակ ֆուլթայլի խումբը՝ ճանչցուած «էֆ.Սէ. Մասիս» անունով, որ իր հերթական

մշակութային գործունէութեան, կազմակերպելով եկեղեցական, կրթական եւ մարզական միջոցառումներ:

Զուիցերիոյ Հայց. Առաքելական Ս. Յակոբ Եկեղեցւոյ Վարչութեան հետ միատեղ կը նշենք ծիսական-եկեղեցական զանազան արարողութիւններ, ազգային-եկեղեցական տօնակատարութիւններ եւ Հայոց լեզուի դասընթացքներ: Ունինք Զուիցերիոյ հայ համայնքի միակ ֆուլթայլի խումբը՝ ճանչցուած «էֆ.Սէ. Մասիս» անունով, որ իր հերթական

խաղերը կը կազմակերպէ Արկաուրի 4րդ պաշտօնական լիկային մէջ: Այս շրջանին, մեր կարեւոր գործերէն մէկը համարեցանք մեր Ակումբի սրահներուն, խոհանոցին, ինչպէս նաեւ այլ յարմարութիւններուն վերանորոգութեան խնդիրը»:

Նախագահին բացման խօսքէն ետք, մեր ազգային-եկեղեցական աւանդութեան համաձայն, հաց, աղ եւ բաժակ մը ջուր զետեղուեցան սեղանին վրայ, եւ կեանքի նշուած բարիքներուն ընդմէջէն գաղութիս հոգեւոր հովիւը օրհնութեան շարականով եւ աղօթքով օրհնեց Ակումբին վերանորոգուած սրահները, ներկայ ժողովուրդը, ինչպէս նաեւ Հայ Դպրոցական եւ Ընտանեկան Միութեան երախտաշատ առաքելութիւնը: Ծնորհաւորանքի եւ գնահատանքի ջերմ խօսքերով ելոյթ ունեցան նաեւ ՀՀ Դեսպանութեան դեսպանորդ Տիկին Սաթենիկ Աբգարեանը եւ Զուիցերիոյ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Աբէլ Քհնյ. Մանուկեանը:

Խանդավառ միջավայրը, աւելի քան հարիւր ազգայիններ իրենց զաւակներուն հետ հայկական ճոխ սեղաններու շուրջ, հոգեպարար զրոյցներով եւ ելոյթներով ամրագրեցին իրենց հայնապատ առաքելութիւնը՝ Զուիցերիոյ հիւրընկալ տարածքին:

Ազգային գործը երախտաշատ առաքելութիւն մըն է: Սփիւռքի մէջ նպաստել հայապահպանութեան եւ ազգային պահանջատիրութեան նպատակներուն, ինչպէս անցեալին, նոյնպէս այսօր եւ ապագային Զուիցերիոյ հայ համայնքէն ներս պիտի ըլլայ Հայ Դպրոցական եւ Ընտանեկան Միութեան ամբողջանուէր ծառայութիւնը:

ՆԵՐԿԱՅ ՄԸ



Գրիգոր Էլմատեան, Կարօ Տէսթիճի, Սաթենիկ Աբգարեան եւ Թիթեո Տէսթիճի

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՕՐ

Մարտ 21՝ Միջազգային Բանաստեղծության Օրուան առթիւ էջ մը կը յատկացնենք երիտասարդ հայ բանաստեղծներու

«Մի գուցէ մեռնելով՝ մարդոց մտքին մէջ բանաստեղծական յուզումներու կը վերածուիմք»
ՄԹԵՖԱՆ ԷՍԷԼ

ԳԱՐԵԳԻՆ ԷՎՈՅԵԱՆ

ԱՏԱՄՆԱՀԱՏԻԿ

Մի օր Բախտը դուռս բախեց,
թողեց գնաց անարձագանգ,
Գէօթէն խօթեց ինչ-որ թղթեր,
աչքով արեց ինձ խորամանկ,
Մեկպոմեմէն քանի՛ անգամ,
արցունքն աչքին, եկաւ-գնաց,
Սայեսթ Նովան մեր պատի տակ
ինչքա՛ն երգեց՝ գործը թողած:

Աստծոյ ծառան խունկ-բուրվառով
եկաւ, որ ինձ տաճար տանի,
Մերժուեց անգամ հրաւերը-
հրամանը ոստիկանի,
Դուրս կանչեցին մարդիկ, ասի՛ լուռ
գերին եմ ես իմ կնկայ,
Կինս ուզեց ինձ տուն քաշի՛ էծերիս
հետ չղերն ընկայ...

Հազար կողմից ինձ կանչեցին, ո՛չ
նեռ դարձայ ես, ո՛չ Յիսուս,
Մինչեւ դանդաղ միտք արեցի՛
կամաց-կամաց դարձայ յիսուն,
Կարդալիքս կիսատ մնաց, գրելիքս՝
միշտ անաարտ,
Մի բանաւոր կեանք ապրեցի որպէս
անհետ-հերթական մարդ:

ՔԱՌԵԱԿ

Այս ի՞նչ եղաւ. եօթ աւետիս, բայց
քառասուն բօթ եմ առնում,
Գալիքների իմ կարօտը անցեալների
մօտ եմ առնում,
Էլի՞ Գալիքի գլուխ շրջուեց,
Էլի՞ կաղը առաջ ընկաւ,
Այս աշխարհի տանիքներից ես
նկուղի հոտ եմ առնում:

ԽՈՂԵՐ

Խոն 1

Նոխազը տանում է հօտը դէպի
Արօտաշատ լանջը:
Հովիւը

Պիտի ենթարկուի հեռուների
Նրա կանչին:
Հասկանո՞ւմ էք...

Խոն 2

Որքան անշարժ մնաս ճահճում,
Այնքան երկար կ'ապրես:
Ամեն շարժումդ
Կ'արագացնի կորուստդ:
Հասկանո՞ւմ էք...

Խոն 3

Աւանակին որքան էլ ծեծենք,
Իրիկունը նա ձե՛ր գոմը պիտի
վերադառնայ:
Նա աւանակ է:
Հասկանո՞ւմ էք...

«Յ.Գ» հատորիկէն

ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ

ՅԱԻԻՏԵԱՆՍ ՅԱԻԻՏԵՆԻՑ

Մուտ գիշեր է եւ Ակն Աստծոյ
անըջում է խուփ կոպի տակ,
եւ խաւարն է ահագնացող
պատասպարում երազ եւ կեանք:

Զարթնել եմ ու աչք եմ ածում
ստուերներին մանուածապատ,
եւ նվառն է մէջս, հաճում
հոգեզեղումն աստուածամարտ:

Կեանքն իր հունով է ընթանում,
մահն իր ճամբէն անգիր գիտի,
հանդիպում է ու բաժանում
զոյզն այդ՝ առանց հրաժեշտի:

Ո՞վ եւ ինչո՞ւ, ե՞րբ կամ որտե՞ղ՝
որոշուած է ողջը նախուստ,
այնպէս որ չի՞ք Տիրոջ աչքից
ո՛չ վրիպում, ո՛չ իսկ փախուստ:

Գգուանք, կողանք ու եռուզե՛ն՝
մահախունճապ իրարանցում,
ո՞ր հտպիտն է ողջն այս բուծել

արարչութեան մասդացում:
Բացուի՞ր պիտի կոպը Աստծոյ
զսպօղակի մղլակի պէս,
որ խմբերթն այս սևամաղձոտ
մի օր անի արեւերես:

Լոյսն այնուհետ պիտի խուժի՞ր
շիթերով գիրթ ու ցիրուցան,
եւ ներխուժմամբ իր այդ գուժի
սկիզբը վերջի արարչութեան:

...Զի երթեւեկն ինքնամատոյց
երբ հասնի իր վերջնակէտին,
խորշակնահար Ակն անպաճոյճ
իր վախճանը գտնի պիտի:

Ե՞րբ կ'աւարտուի, ու՞ր կը պարպուի
հերթափոխն այս խոտորընթաց,
վերեն Աստուած՝ չի իմացուի
խոկն անեղին խոր քուն մտած:

Յայտնի է լոկ, որ կոպն Աստծոյ
ծանրացել է հուր-յաւիտեան,
զի նրան է՛լ չկայ պրծում
բիրտ օրէնքից ձգողութեան:

ԼՈՒՍԻՆԷ ՔԷՇԻՇԵԱՆ

(10 տարեկան)

ԵՐԱԶ . . .

Երազը անոյշ է
Ուրախ ու քնքոյշ է,
Լաւ ու վատ
Բան չի փոխեր,
Չենք կրնար զայն չտեսնել:
Մարդու յուշիկ միտքը կ'ալեծփէ
Երբ անկարելի աշխարհ կ'երեսակայէ
Եւ այդ միտքը երջանկութիւն կը բերէ:
Իսկ ով իմ երազը տեսնէ
Իրեն աչքէն անձրեւ կը թափէ:

maman, bougeant comme une
feuille d'automne,
jolie comme la blancheur de
l'hiver,

tes yeux brillants comme le soleil
d'été,
ton sourire fleurissant encore plus
vite que le printemps.

maman, tu m'arroses d'amour et
moi j'essaie d'en faire autant.

maman, si tu es ma mère ce n'est
pas pour rien,
ton cœur si pur est tellement
grand,

que tu pourrais me chérir jusqu'à
la fin des temps,
je t'aime **maman**.

ՎԵՐՋԻՆ ԱՆՄԵՂԸ ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ

Արտասահմանի զանազան վայրերէն եգիպտոս այցելող քիչ թէ շատ ծանօթ ընկերներու համար բախտաւորութիւն մըն էր ընկեր Վարդանին տիրապետութիւնը այնտեղ: Գործ կը բացուէր Հրաշք-Գրիգորին: Ընդունելութիւնը անխախտօրէն կը հպատակէր նոյն յայտագրին: Նախ, գլուխ-գլխի ճաշ մը ընկեր Վարդանին տան մէջ, ինչ որ պզտիկ պատիւ մը չէր հիւրին համար: Ծաշէն ետք, մեկնած պահուն.

– Գրիգոր, ընկեր Աեղբարկը յանձնում եմ քեզ, մենակ չթողնես...

Ու Գրիգորը փակած է մարդուն կրունկին դէպի «տեսարժան վայրերը», մինչեւ եգիպտոսի աւազը թօթուելը, թոյլ չտալով որ աչք բանայ եւ պատեհութիւն ստեղծուի որ շփուի ընկեր Վարդանին դէմ քրթմնշող քանի մը ընկերներու հետ – աւա՞ղ, աստուածներն անգամ կ'ունենան իրենցմէ դժգոհ հրեշտակներ, եւ ընկեր Վարդանը բացառութիւն չէր կազմեր – մանաւանդ առանձին չգտնուի Գուրգէնին հետ, նոյնիսկ բժիշկ նաչերեսեանին: Այս վերջինէն ալ սկսած էր խրտչիլ ու կասկածիլ: Անոր անսեթեւեթ ու բաց խօսքերը, կէս-լուրջ կէս-կատակ ակնարկութիւնները այլեւս հաճելի չէին: Մանաւանդ Յիսնամեակի միջադէպէն ի վեր: Այդ օրը բժիշկը իր աչքին փիղ մը դարձաւ – բաւական կը նմանէր ֆիզիքական փարթամութեամբը – որ անփութօրէն կը կոխկռտէ նուրբ ծաղիկներով յարդարուած ածուի մը վրայ: Իր ածուն: Յայտնի չէր ըներ, բայց չէր մոռցած:

Կուսակցութեան յիսնամեակին, ընկեր Վարդան մեծ ներշնչում մը ունեցաւ: Առտու մը, «Լուսաբեր»ը ձեռք առնողները ցնցուեցան: Բոցաշունչ, սաւառնաթեւ խմբագրական մըն էր, թերթին լման երկու էջերը գրաւող, եւ ճակատին վրայ միակ բառ մը – վերնագիրը – որուն տառերը տպարանէն չէին, այլ գծագրութեամբ քիչէն եղած, փթամատնոց գիրեր, ութ սիւնակներուն

լայնքով – ԴԱՇՆԱԿՈՒՆԻՔ:

Կարելի չէր կարդալ առանց յուզումի: Տողերը թուղթի վրայ տպուած չլլային կարծես, այլ ճարձատող պղինձէ թերթերու: Շառաչ կը հանէր ձեռքերու մէջ, փոթորիկ ուղեղներու մէջ – ԴԱՇՆԱԿՈՒՆԻՔ: Համոզիչ, սպառիչ, բարձրաթուի: Կարճ լայնածաւալ էջերու վրայ թաւալող այդ հեղեղին՝ ահա միտք բանին, երկու տողով: – Բագրատունեաց հարստութեան կործանումէն ետքը, ինչ հարիւր տարի սպասել պէտք եղաւ, մինչեւ որ հասնի ընտրեալներու սերունդ մը եւ հիմնէ արքայական նոր տոհմը – ԴԱՇՆԱԿՈՒՆԻՔ:

Հակառակորդներուն համար՝ դիւրին էր հեզնել ու անցնիլ: Կուսակիցներուն կողմէ՛ հաճելի էր պահմը խանդավառուիլ ու մոռնալ: Բայց պէտք է ըսել, ընկեր Վարդանին այս պատմական թոխքը կէտով միայն սխալ էր, եւ այդ սխալը աւելի բանաձեւումին մէջ էր քան թէ խորքին: Արդարեւ, պետութիւն եւ թագաւորութիւն կորսնցուցած ժողովուրդ մը, հարիւրամեակներու անշքացումէն եւ ստրկացումէն ետք, երբ յանկարծ իր թմրած ջիղերուն երկայնքին սարսուռներ կ'ապրի շնորհիւ բուռ մը անձնուէր խենդերու հանած աղմուկին, կորսուած ու մոռցուած բառեր – հայրենիք, ազատութիւն, անկախութիւն – Ալիշաններու քնարին վրայ երգ ու Բաֆֆիններու ձեռքին մէջ ուժանակ դառնալէ ետք, օր մըն ալ ընդվզումի դրօշներու կը վերածուին, ի վերջոյ յանգելու համար իրական հայրենիքի մը եւ իրական դրօշի մը՝ արդար է որ Հայ Յեղափոխութիւնը ստանար ազնուապետական իր կոչումը, ընկեր Վարդանին մտքերուն հետեւելով ըսենք, արքայական տիտղոսը: Հազարամեակներու լայն պաստառին վրայ ինքնութիւն պահող ժողովուրդի մը պատմութեան մէջ, կարելի էր ընդունիլ, թէ այո, Հայ Յեղափոխութիւնը վերակազմեց թագաւորական տուններու

խզուած շղթան, եւ անկախ Հայաստան մը եղաւ իր ճիգերուն պսակումը, նոր ժամանակներու պիտակով՝ Հանրապետութիւն մը:

Բայց ընկեր Վարդանին մոլորանքը հոն էր, որ կ'իւրացնէր Հայ Յեղափոխութիւնը միայն իր Կուսակցութեան հաշուոյն, անտեսելով միւսները որոնք նուազ արին եւ կախաղաններ չէին տուած ազատութեան ճանապարհին վրայ: Ծիշող է որ իր Կուսակցութիւնը մեծագոյնն էր, ծաւալունը, առաջինը: Բայց առաջինը ըլլալ չի նշանակեր ըլլալ ամբողջը: Վարդանին հաշիւը ճիշդ էր, հաշուեւտութիւնը ընդունելի չէր: Եւ հոտ էր որ իր արմատական խառնուածքը ծայրայեղութեան կը տանէր զինք, բուռն հակազդեցութիւններ առաջացնելով նոյնիսկ իր Կուսակցութեան մէջ: Ինք տեւաբար կ'ապրէր մտային եւ զգացական երկրորդ վիճակ մը, ընդմիջտ խզուած ընդհանրական չափերէն եւ չափաւորութենէն: Կ'ըսէր. – «Թոխք արա ինչ հարիւր տարիների խաւարի վրայից, հասիր այդ ժամանակի հանգոյցը, եւ ինչ կը տեսնես: Կը տեսնես կործանող Անիի հրդեհների բոցը, մինչեւ աւերածութեան ծուխն ու փոշին ի սպառ հանգցնեն լոյսի վերջին շողերը: Նոյն թոխքով ետ արի մեկնակէտիդ, եւ ինչ կը տեսնես: Կը տեսնես շողշողուն Եռագոյնը պարլամենտի կատարին: Այդ երկու բեւեռների մէջտեղ, հազարամեակի անյատակ վիհերում, չկայ ոչինչ, ոչինչ չկայ բացի ստրկութիւնից եւ ամօթից: Եւ իմացէք, այդ անդունդի միւս պոռնկից մարմրած բոցը դո՛ւք խլեցիք, Մայիս 28ին արծարծելու համար մեր ազատութեան անշէջ կրակը – ԴԱՇՆԱԿՈՒՆԻՔ...»

Հոնտորական սլացք չէր այս բոլորը իր աչքին: Հաւատքէն աւելի բան մը: Իր հաւատամբը: Ծաղրանկարիչ Սարուխանը անգամ մը եւս փայլեցաւ ներկայացնելով ընկեր Վարդանը թագով եւ մականով, գահի մը վրայ: Վարդան ինքն ալ խնդաց նկարը տեսնելով, եւ այդքան: Անակնկալ մը չէր: Հակառակորդ մամուլէն ուրիշ բան չէր սպասեր: Բուն հարուածը, որուն երբեք չէր սպասեր, եկաւ իրեններէն, անսպասելիօրէն դաւադիր:

Իրիկունը, խմբագրականին ազդեցութեան տակ, ընկերները աւելի մեծ թիւով խմբուած էին ակումբ եւ շրջապատած ընկեր Վարդանը, որ բացառաբար հաճած էր պահ մը յամենալ տղոց մօտ ու կ'ըմբոշխնէր անոնց խանդավառութիւնը:

**ՄԱՇՏՈՑ
ՀԱՅ ԼԵԶՈՒԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ
ՄԻՈՒԹԻԻՆՆ**
կը կազմակերպէ

**ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ
ՄՐՑՈՒՄ**

8-20 տարեկան պատանիներու եւ երիտասարդներու միջեւ

ԿԻՐԱԿԻ, ՄԱՐՏ 27,
ԺԱՄԸ 15ԻՆ

Հ. Բ. Ը. Միութեան

«Ալէք Մանուկեան» կեդրոնին մէջ
118 rue de Courcelles, Paris 17^e,
Métro : Courcelles

ՊԱՅՄԱՆՆԵՐ

1) 8 - 13 տարեկան պատանիներու համար մրցումին պարտադիր կտորն է Միսաք Մեծարեցցի ՀԻԻՂԸ, իսկ երկրորդ կտորին ընտրութիւնը ազատ է:

ՊԱՐԳԵԻՆԵՐ - Առաջին երկրորդ եւ երրորդ հանդիսացողները պիտի ստանան 80, 50, 30 եւրօ:

2) 14 - 20 տարեկան երիտասարդներու համար պարտադիր կտորն է Դանիէլ Վարուժանի ԱՆԴԱՍՏԱՆը, իսկ երկրորդ կտորին ընտրութիւնը ազատ է:

ՊԱՐԳԵԻՆԵՐ - Առաջին երկրորդ եւ երրորդ հանդիսացողները պիտի ստանան 100, 70, 50 եւրօ:

Իսկ բոլոր մասնակցողները պիտի ստանան յուշանուէրներ եւ վկայագիրներ:

Ծնողներէն, ուսուցիչներէն, դպրոցներու եւ մշակույթի տուներու ղեկավարներէն կը խնդրուի պատրաստել տղաքը եւ զանոնք մղել մասնակցելու այս մրցումին:

Հայկական դպրոցներ չյաճախող թեկնածուներ ալ իրաւունք ունին մասնակցելու՝ եթէ ի վիճակի են:

Արձանագրութեան համար հեռաձայնել 01 47 50 97 51 թիւին, ստանալու համար մասնակցութեան իրաւունք:



**CROIX BLEUE DES
ARMÉNIENS
DE FRANCE
ՖՐԱՆՍԱՀԱՅ
ԿԱՊՈՅՏ ԽԱԶ**

**Section ARAX de Lyon
Villeurbanne**

Dans le but de garder nos traditions et pour assurer leurs transmissions

La Croix Bleue des Arméniens de France section de Lyon Villeurbanne vous convie au repas de MITCHINK (Mi-Carême) préparé spécialement pour cette journée

le mercredi 30 Mars 2011
à 12 heures

à la salle de Garbis Manoukian
295, rue André Philip 69003 Lyon
réservation- MCAV: 04 78 26 28 10
CBAF 04 78 23 75 13

ՄԻՋԻՆՔ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Լիոն-Վիլլեւորպանի Արաքս Մասնաճիւղը կը հրաւիրէ ձեզ միասին տօնելու մեր աանդական Միջինքը եւ ճաշակելու՝ մասնատրաբար պատրաստուած

օրուան յատուկ ճաշերը
Չորեքշաբթի 30 մարտ 2011ին ժամը 12-ին Լիոնի Ա.Յակոբ Եկեղեցու կից Կարպիս Մանուկեան Սրահին մէջ:

ապահովեցէ՛ք ձեր տեղերը
հեռաձայնելով
ՖԿԽ՝ 04 78 23 75 13 եւ
ՎՀՄՏ՝ 04 78 26 28 71 թիւերուն

**LA SECTION DÉCINES
Organise**

Un repas dominical
à l'occasion du Mi-Carême

**Le Dimanche 3 avril
à partir de 12 h**

À la Salle des Fêtes de Décines
Avec un menu de mets traditionnels
de Mi-Carême

L'après-midi sera animé par
D.J Mika

Participation pour les adultes
20 €, apéritif et vin compris
Enfants jusqu'à 10 ans: 12 €

Renseignements et réservation au
06 50 90 22 63 ou

06 21 74 43 50

**LA SECTION ASTRIG
DU VAL D'OISE**

vous invite
à participer à l'après-midi
« Rencontre et Culture »,
le lundi 11 avril, à 14 heures,
au 71 avenue Henri Barbusse à
Arnouville (95400).

Le thème du jour sera :
Les intellectuels et notables
victimes du génocide.
Venez discuter avec nous de tout
et de rien... Chaque personne peut
s'exprimer...

À noter que d'autres sujets peuvent être
abordés car la « parole est ouverte ».

Renseignements :
Anita BOGHOSSIAN :
01 39 90 76 19 – 06 16 79 93 26

**SECTION ASTRIG DU VAL D'OISE
COMMUNIQUÉ**

Afin de réaliser pleinement son programme d'enseignement de la langue arménienne, qui doit conduire nos enfants à l'épreuve d'arménien au baccalauréat, la CBAF section Astrig du Val d'Oise ouvre une classe de maternelle pour les enfants de 3 à 6-7 ans.

Des jeux, de la danse, du dessin, des activités diverses, privilégiant l'expression orale, auront pour objectif l'apprentissage de la langue arménienne.

Inscrivez rapidement vos enfants à la
CBAF section Astrig d'Arnouville
Tel : Maral KELECHIAN
01 39 85 26 32
06 72 45 73 47

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Վալ տ'Ուազի «Աստղիկ» մասնաճիւղը իր երկօրեայ հայերէն լեզուի ուսուցման ամբողջական ծրագիրը հետեւողական դարձնելու համար, այս տարի զարկ կու տայ մանկապարտէզի դասարաններուն Յէն 6-7 տարեկան մանուկներու համար:

Խաղ, երգ, պար, մարմնական շարժումներ, գծագրութիւն, ձեռային աշխատանք եւ այլ զբօսներ հիմք պիտի ծառայեն յատկապէս բերանացի հայերէնով հայ մանուկը ընտելացնելու հայերէն լեզուին:

Շուտով դիմեցէ՛ք Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Արնուվիլի մասնաճիւղին՝ Մարալ Քէլէշեան - հեռաձայն՝
01 39 85 26 32 - 06 72 45 73 47



Péniche ANAKO
des peuples et cultures du monde

LE MOIS DE L'IRAN

mardi 22 mars à 20h30
film «l'Ami» de Sara Rastegar

mercredi 23 à 20h30
Contes à Croquer
participation 6 euros

jeudi 24 mars à 20h30
concert de jazz Astargallus
avec Stéphane Payen, sax,
Xavier Bornens, trompette,
Ilanik Tallet, batterie, Thierry Mavian
Marietan, contrebasse.
participation 8 euros, 6 tarif réduit

samedi 26 mars à 20h30
Azarine 6 jazz «multi kulti» Assen
Tzankov, batterie, Nicolas Bezins,
trompette, Jean Baptiste Lecanu,
basse,
Arshid Azarine, piano, Habib Mefteh
Boushehri, percussions, flûtes,
Stéphane Mouchabac, saxophones,
Hamid Reza Javdan et Nerijhe ,
performances et voix
participation 12 euros, 8 t.r

dimanche 27 mars à 17h
Poésies arméniennes de Nouvel Djoulfa
(Isphahan), Rouben Haroutunian, chant,
récitant et setar, Anouch Donabedian,
kamantcheh.
participation 12 euros, 8 t.r

AVRIL : LE MOIS DES RENCONTRES SOLIDAIRES

SOIRÉE BILAN UGAB UFAR

en présence de Joëlle le Morzellec,
Recteur de l'Université française en Arménie
et Alexis Govciyan, *Président de l'UGAB Europe*

Jeudi 31 mars, de 20h à 22h

Centre Culturel Alex Manoogian de l'UGAB
118 rue de Courcelles, 75017 Paris

Cette soirée bilan sera une occasion : de parler de la politique de coopération
et d'assistance de l'UGAB au profit de l'UFAR; d'évaluer le programme
de stages de l'UGAB au profit des étudiants de 4^e année de l'UFAR.

Profitons de cette occasion pour partager nos appréciations
et poser nos questions.

SVP confirmer votre présence : 01 45 24 72 75 ou contact@agbueurope.org

HAMASKAINE COURANTS D'ART



REPAS A L'OCCASION DE LA MI-CAREME

ՄԻՉԻՆՔ

LE DIMANCHE 3 AVRIL 2011 A 12 H 30

ԿԻՐԱԿԻ 3 ԱՊՐԻԼ 2011 ԺԱՄԸ 12 : 30

AVEC POUR LA PREMIERE FOIS :

- ❖ **LA TROUPE DE THEATRE DES ENFANTS
DE COURANTS D'ART : "PAREGENTAN"**
- ❖ **LA TROUPE DE DANSE C.B.A.F. – SOSSE
MAYRIG**

PAF : ADULTE : 25,00 €

ENFANT : 15,00 €

(6 à 12 ans)

Réservations :

Marie : 06 16 78 08 71

Seta : 06 10 25 17 16

HAMASKAINE – 60 Boulevard Pinatel – 13012 Marseille

JEUDI 24 MARS A 20 HEURES

CINÉ-CLUB

ROUBEN MAMOULIAN

ՆԱՄՈՒՍ NAMOUS (l'Honneur)

Sous titré en français



De Hamo Bek-Nazarov

1925 - drame - 1 h 24

Le premier film de fiction muet du cinéma arménien
d'après le roman d'Alexandre Chirvanzadé.

Une amitié de longue date lie la famille du tailleur Barkhoudar à la famille du potier
Hairo. La fille du tailleur, la belle Soussan, a été fiancée suivant l'antique coutume
arménienne au fils du potier, Seiran.
L'amitié entre la fillette et le garçon s'est développée jusqu'à devenir un amour réci-
proque. Tout le monde connaît cet amour. Mais les deux pères sont sûrs que leurs
enfants vont suivre l'antique coutume et attendre le jour des noces pour se voir. Le
fougueux Seiran outrepassa cette vieille coutume et voit plusieurs fois Soussan en
cachette. Le père de la jeune fille, gardien farouche des coutumes ancestrales, a été
le témoin occasionnel d'une de ces rencontres...

**ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
ՓԱՐԻՉ**

**ԱՐԵՒԱԳԱԼ
ԵՒ ՀՍԿՈՒՄ**

*Ամեն Չորեքշաբթի ժամը 18ին
Խաղաղական եւ Հանգստեան
Ժամերգություն (հսկում)*

*Ամեն Ուրբաթ ժամը 10ին
Արեւազալի Ժամերգություն*

Sous le Haut-Patronage de l'Ambassade
d'Arménie en France

jours de l'Arménie

Ateliers créatifs
23 mars, 30 mars et 6 avril

Spectacle de danse
Compagnie Navasart
Jeudi 24 mars à 20 h 30

Exposition
du 23 mars au 6 avril

Concert chorale
Koghtan de l'UGAB
Samedi 2 avril à 20 h 30

Centre Culturel Alex Manoogian
de l'UGAB

118, rue de Courcelles 75017 Paris

Entrée libre sur réservation
contact@agbueurope.org
ou 01 45 20 03 18

Musique arménienne

Lydie Barkev, piano
Lucie Deroïan, chant

Concert au profit du Fonds
Arménien de France
(équipement d'écoles en Arménie)

dimanche 27 mars à 16h

Espace Saint-Sauveur
Hôpital Corentin-Celton
4 parvis Corentin-Celton
Issy-Les-Moulineaux
Métro Coarentin-Celton, ligne 12,
Direction Mairie d'Issy
Entrée libre participation

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Ավփորվիլի Սուրբ Մեսրոպ
Կրթարանի մանկապարտէզի
աշակերտներուն համար կը փնտրուի
ԿԻՆ ՕԳՆԱԿԱՆ ՄԸ՝ ՀԱՅԱԽՕՍ
ՇԱԲԱԹԱԿԱՆ 20 ԺԱՄ
Դիմել դպրոցի տնօրէնութեան
4, rue Komitas, Alfortville
Հեռ.՝ 01 43 96 18 13

Le PSD HENTCHAKIAN & l'Armenian Council of Europe

organisent une
Conférence-débat :

**PAIX ET SÉCURITÉ AU SUD-CAUCASE
QUEL AVENIR POUR LA RÉGION ?**

Dans le cadre du 20^e anniversaire de l'indépendance
de la République d'Arménie.

En présence et sous le haut patronage de S. Exc. M. l'Ambassadeur
de la République d'Arménie en France, Viguen Tchitetchian
et de M. le Député-Maire André Santini.

Vendredi 25 mars de 15h à 19h
Suivie d'un cocktail

Salle Lamartine - Immeuble Jacques Chaban-Delmas
101 rue de l'Université - 75007 Paris

Contact : 06 78 73 25 82

Sur inscription au : www.armeniancouncil.org
contact.europe@armeniancouncil.org

Les intervenants :

Gérard Achdjian, Jacques Deyirmendjian, Frédéric Encel, Taline Papazian,
Vahan Shirkhanian, Julien Zarifian

Association MACHTOTZ

Pour la Défense de la Langue Arménienne

L'ASSEMBLÉE GÉNÉRALE
de l'Association MACHTOTZ

aura lieu

mardi, 22 mars à 18h

au Centre Culturel Alex Manoogian - U.G.A.B.
118 Rue de Courcelles, 75017-Paris (Métro : Courcelles).

Ordre du jour :

Rapport moral - Rapport financier - Élection du nouveau Bureau - Divers
*Cette réunion revêt, cette année, un caractère particulièrement important car
il sera évoqué la mise sur pied d'un nouveau projet. Votre présence est donc
vivement souhaitée.*

le Conseil d'Administration

SPORTING

2gether 4justice

Jeux Sportifs Intercommunautaires Arméniens
de l'Union Arménienne de Suisse

22 au 25 avril 2011 à Genève

www.uas-games.ch

ÉVÉNEMENT UNIQUE POUR LA JEUNESSE ARMÉNIENNE D'EUROPE

Revendiquons - Manifestons - Commémorons
Participons au sport

Échangeons - Rassemblons

Pour s'inscrire ou pour toute demande d'information,
veuillez visiter le site www.uas-games.ch
nous écrire à info@uas-games.ch
nous appeler au 0041 79 303 17 49